# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 02/19

ք. Գյումրի «13» փետրվարի 2019 թ.

«Ընտանիք» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ա. Մինասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Էդգար Կարապետյանը, ի դեմս Էդգար Կարապետյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով, Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված հետևյալ հոդվածներով ապրանքները, (այսուհետ ապրանք)՝ /Կաուչուկ և պլաստմասսա/, /Տեքստիլ մանվածք և թելեր/, /Հատուկ հագուստ և պարագաներ/, /Կահավորանք/, /Գործիքներ, փականներ, բանալիներ, կախիչներ, ամրացնող դետալներ, շղթաներ և զսպանակներ/, /Կտորներ/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 7 աշխատանքային օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք՝

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված Ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել Ապրանքի մատակարարումը Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 117 800 /մեկ հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված Ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[1]:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված Ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (հավելված N 4): ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով Ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված Ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված Ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:
8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ Պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով
սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:
8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:
8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը: Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
8.6 Եթե Պայմանագիրն իրականացվում է գործակալության Պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

---

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է*

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել Ապրանքի օգտագործման պահանջը:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով Պայմանագիրը չի կարող փոփոխվել կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը և Պայմանագրի N 1, N 2, N 3 N4 N 4.1 հավելվածները, որոնք համարվում են Պայմանագրի անբաժանելի մաս, կազմված են 15 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենքները և համապատասխան իրավական ակտերը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ | Ա/Ձ Էդգար Կարապետյան |
| ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2 | ք. Գյումրի Չերազի փ 4/1 |
| ՀՎՀՀ 05504412 | ՀՎՀՀ 88948939 |
| Հ/Հ 900018005554 | Հ/Հ 163128034044 |
| Երևանի թիվ 1 ՏԳԲ | « Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Գյումրու մ/ճ |
| Ա. Մինասյան | Է. Կարապետյան |
| ---------------------------------------- (ստորագրություն) | ---------------------------------- /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
« 13» փետրվարի 2019 թ. կնքված
ԲՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 02/19 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| **19520000 Կաուչուկ և պլաստմասսա** | | | | | | | | | | |
| 1. | 19520000 | Ոլունք բազմանիստ Ф-8մմ | Պլաստմասե, արհեստական քարեր ուլունքագործության խմբակի ուսուցողական աշխատանքների համար բազմանիստ h-8մմ | կգ | 10000 | 5000 | 0,5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 0,5 | 11.03.19թ |
| 2. | 19520000 | Ուլունք մանր Ф-2մմ | Պլաստմասե, արհեստական քարեր ուլունքագործության խմբակի ուսուցողական աշխատանքների համար բազմանիստ Ф-2մմ | կգ | 3800 | 1900 | 0,5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 0,5 | 11.03.19թ |
| Ընդամենը | | | | | | 6900 | | | | |
| **19400000 Տեքստիլ մանվածք և թելեր** | | | | | | | | | | |
| 3. | 19400000 | Ուլունքի թել Ф-0,2մմ 30մ | Ուլունքի թել լ թափանցիկ, Ф-0,2մմ Լ-30գծմ: Նյութը՝ 100% նեյլոն: | փաթեթ | 350 | 1750 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | 11.03.19թ |
| 4. | 19400000 | Կապրոն թել 50կ | Կապրոն թել գծային խտությունը՝ 50K: Բաղադրությունը՝ պոլիամիդե թելերի համակցություն, պատված | հատ | 350 | 700 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 11.03.19թ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հատուկ նյութով, գերտաքա ցումից պահպանելու համար: կտրման ամրությունը ոչ պակաս՝ 2կգ.վրկ | | | | | | | |
| 5. | 19400000 | Թել կոճի փոքր N40/2 /25գ//գունա վոր/ | Տարբեր գույների, օգտագործվում է ասեղնա գործութ յան, կարի աշխատանք ների համար N40/2 /25գ/ | հատ | 150 | 1500 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | 11.03.19թ |
| 6. | 19400000 | Թել կոճի մեծ N40/2 3829մ/գուն ավոր/ | Պոլիեսթեր՝ 3829 մետր, տարբեր գույնի, օգտագործվում է ասեղնա գործության, կարի աշխատանք ների համար N40/2 | հատ | 750 | 7500 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | 11.03.19թ |
| 7. | 19431300 | Թել բամբակյա 35խտ | Բամբակյա թել 35 խտ., օգտա գործվում է գորգի հենքի համար: | կգ | 3500 | 7000 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 11.03.19թ |
| 8. | 19431200 | Թել բրդյա 40խտ | Բրդյա թել 40 խտ. Օգտագործվում է գորգը գործելու համար | կգ | 4500 | 9000 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 11.03.19թ |
| 9. | 19400000 | Իրիս թել 30գր, 180մ | Մետաքսյա - բամբակյա թել, 30գր, 180մ | հատ | 350 | 4200 | 12 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 12 | 11.03.19թ |
| 10. | 19400000 | Մուլենի թել N12 20մ | Բամբակյա թել 20մետր N12 | հատ | 200 | 2400 | 12 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 12 | 11.03.19թ |
| **Ընդամենը** | | | | | | **34050** | | | | |

**18400000 Հատուկ հագուստ և պարագաներ**

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11. | 18450000 | Մետաղա կան լար Փ-0,2մմ | Մետաղական լար Փ-0,2մմ նեյլոնե ծածկույթով | փաթ ույթ | 800 | 1600 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 11.03.19թ |
| 12. | 18450000 | Ուլունքի փական <Կարտյե> | Ուլունքի մետաղական /պողպատյա կամ պղնձե զսպանակավոր փական օղակով, շղթայի նամրացնելու հնարավորութ յամբ, պատված արծաթագույն, կամ ոսկեգույն շերտով: | հատ | 50 | 500 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | 11.03.19թ |
| 13. | 18450000 | Մետաղյա շղթա՝ Փ-10մմ | Մետաղական շղթա պատված արծաթագույն, կամ ոսկեգույն շերտով, օղակների տրամագիծը 10մմ: | գծ.մ | 1000 | 500 | 0,5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 0,5 | 11.03.19թ |
| 14. | 18450000 | Մետաղյա շղթա՝ Փ-3մմ | Մետաղական շղթա պատված արծաթագույն, կամ ոսկեգույն շերտով, օղակների տրամագիծը 3մմ: | գծ.մ | 700 | 350 | 0,5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 0,5 | 11.03.19թ |
| 15. | 18450000 | Մետաղա կան օղակ Փ-5մմ | Մետաղական օղակ պատված արծաթագույն, կամ ոսկեգույն շերտով, տրամագիծը 5մմ: | գ | 3 | 150 | 50 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 50 | 11.03.19թ |
| 16. | 18450000 | Մետաղա կան գավաթիկ ուլունքի Փ-5մմ /Калотты/ | Մետաղական զանգականման ուլունքի դետալ, տրամագիծը՝ 5մմ: Օգտագործվում է ուլունքով հավաքված շղթայի ծայրերը փակելու համար: | գ | 3 | 150 | 50 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 50 | 11.03.19թ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | | | | | | **3250** | | | | |
| **39200000 Կահավորանք** | | | | | | | | | | |
| 17. | 39224530 | Ասեղ ձեռքի /10 հատ/ | Բարակ ասեղ, օգտագործվում է հագուստի մոդելավորման, ասեղնագործու թյան, գործելնագործ ծու թյան, ուլունքագործու թյան մեջ, №10 | տու փ | 350 | 3500 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | 11.03.19թ |
| 18. | 39224500 | Օղակ /շրջանակ/ ասեղնագործության միջին Փ-19սմ | Օղակ ասեղնագործու թյան փայտյա, հղկված, ամրացնող պտուտակը մետաղական Փ-19սմ | հատ | 1000 | 10000 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | 11.03.19թ |
| 19. | 39224500 | Օղակ /շրջանակ/ ասեղնագործության մեծ Փ-24սմ | Օղակ ասեղնագործ ծութ յան փայտյա, հղկված, ամրացնող պտուտակը մետաղական Փ-24սմ | հատ | 1500 | 15000 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | 11.03.19թ |
| **Ընդամենը** | | | | | | **28500** | | | | |
| **44500000 Գործիքներ, փականներ, բանալիներ, կախիչներ, ամրացնող դետալներ, շղթաներ և զսպանակներ** | | | | | | | | | | |
| 20. | 44500000 | Հելյուն /6 հատ/ | Մետաղյա գործիք ծայրը կեռիկով, օգտագործվում է գործելնագործության մեջ /6հատ | տու փ | 1500 | 4500 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | 11.03.19թ |
| **Ընդամենը** | | | | | | **4500** | | | | |
| **19210000 Կտորներ** | | | | | | | | | | |
| 21. | 19211800 | Ժապավեն կտորից 6սմ լայն. | Ժապավեն մետաքսե տարբեր գույների, լայնությունը 6սմ | գծ.մ | 220 | 2200 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | 11.03.19թ |
| 22. | 19211800 | Ժապավեն կտորից 2սմ լայն. | Ժապավեն մետաքսե տարբեր գույների, լայնությունը 2սմ | գծ.մ | 50 | 500 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | 11.03.19թ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | |
| 23. | 19211500 | Կտավ 150սմ լայն. | Վուշե կտոր, որն օգտագործվում է ասեղնա գործության և գեբելենա գործության մեջ 150սմ լայնությամբ | գծ.մ | 4500 | 9000 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 11.03.19թ |
| 24. | 19211200 | Կանվա 90սմ լայն. | Ցանցավոր օսլայած բամբակյա հավասարա չափ հյուսվածքով կտոր նախատեսված է ասեղնագոր ծության, համրովի աշխատանք ների համար: 90սմ լայնությամբ | գծ.մ | 3500 | 7000 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 11.03.19թ |
| 25. | 19211200 | Կտոր բամբակյա բարակ սպիտակ լայն. 150սմ | Բամբակյա գունավոր կտոր բարակ՝ նախատեսված հագուստ կարելու համար 150 սմ լայնությամբ: Խտությունը՝ 113-150 գ/քառ.մ | գծ.մ | 1200 | 7200 | 6 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 6 | 11.03.19թ |
| 26. | 19211200 | Կտոր բամբակյա գունավոր 150սմ լայն. | Բամբակյա գունավոր կտոր բարակ՝ նախատեսված հագուստ կարելու համար 150 սմ լայնությամբ: Խտությունը՝ 113-150 գ/քառ.մ | գծ.մ | 1200 | 7200 | 6 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 6 | 11.03.19թ |
| 27. | 19210000 | Կտոր մետաքսյա 150սմ լայն. | Կտոր մետաքսյա հաստ 150սմ: Խտությունը ըստ հենքի 50-70%, ըստ | գծմ | 1500 | 7500 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | 11.03.19թ |

*Հավելված N 2*
*« 13» փետրվարի 2019 թ. կնքված*
*ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 02/19 ծածկագրով պայմանագրի*

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | |
|---|---|
| Գնման ժամանակացույց Մատակարարման ժամկետը և վայրը | Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո ամենաուշը 7 աշխատանքային օրվա ընթացքում : Ապրանքի տեղափոխումը իրականացնում է մատակարարը , հասցե ք.Գյումրի ,Անի թաղ. 11փ. 5/2 |
| Վճարման ժամկետը /վճարման ժամանակացույց | Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում հաստատված ընդունման –հանձնման արձանագրությունների հիման վրա 20 աշխատանքային օրում : |

**ԳՆՈՐԴ**
«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05504412
Հ/Հ 900018005554
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Ա. Մինասյան
-----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
Ա/Ձ Էդգար Կարապետյան
ք. Գյումրի Չերազի փ 4/1
ՀՎՀՀ 88948939
Հ/Հ 163128034044
« Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Գյումրու մ/ճ
Է. Կարապետյան
-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1-2 | ***19520000*** | Կաուչուկ և պլաստմասսա | | 6900 | 6900 | 6900 | 6900 | 6900 | 6900 | 6900 | 6900 | 6900 | 6900 | 6900 | 6900 |
| 3-10 | 19400000 | Տեքստիլ մանվածք և թելեր | | 34050 | 34050 | 34050 | 34050 | 34050 | 34050 | 34050 | 34050 | 34050 | 34050 | 34050 | 34050 |
| 11-16 | 18400000 | Հատուկ հագուստ և պարագաներ | | 3250 | 3250 | 3250 | 3250 | 3250 | 3250 | 3250 | 3250 | 3250 | 3250 | 3250 | 3250 |
| 17-19 | 39200000 | Կահավորանք | | 28500 | 28500 | 28500 | 28500 | 28500 | 28500 | 28500 | 28500 | 28500 | 28500 | 28500 | 28500 |
| 20 | 44500000 | Գործիքներ, փականներ, բանալիներ, կախիչներ, ամրացնող դետալներ, շղթաներ և զսպանակներ | | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 |
| 21-27 | 19210000 | Կտորներ | | 40600 | 40600 | 40600 | 40600 | 40600 | 40600 | 40600 | 40600 | 40600 | 40600 | 40600 | 40600 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05504412
Հ/Հ 900018005554
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Ա. Մինասյան
______________________
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
Ա/Ձ Էդգար Կարապետյան
ք. Գյումրի Չերազի փ 4/1
ՀՎՀՀ 88948939
Հ/Հ 163128034044
« Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Գյումրու մ/ճ
Է. Կարապետյան
--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Պայմանագրի կողմ

_______________________

_______________________

գտնվելու վայրը _____________
հհ _______________________
հվհհ _____________________

Պատվիրատու

_______________________

_______________________

գտնվելու վայրը _______________
հհ_________________________
հվհհ_______________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«     » «          » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     »  «          » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_______________________
ստորագրություն

_______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_______________________
ստորագրություն

_______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ Ν ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ________________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված Ν ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________
ազգանուն, անուն

________________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«13» փեւրվարի 2019 թ. կնքված*
*ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 02/19ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրիկողմ
Ա/Ձ ԷդգարԿարապետյան
ք. Գյումրի Չերազիփ 4/1
հh163128034044
«Հայէկոնոմբանկ »ԲԲԸԳյումրու մ/ճ
hվhh88948939

Պատվիրատու
«Ընտանիք» ՄՊՍԿՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
hh900018005554
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հվhh05504412

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«14» «փետրվարի» 2019 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագիր**
Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «13» «փետրվարի» 2019թ.
Պայմանագրիհամարը՝ ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 02/19
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ «14» «փետրվարի»2019թ. դուրս գրված NԲ0423729843հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատակարարելէհետևյալապրանքները՝

| N | Մատակարարվածապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկականբնութագրիհամառոտշարադրանքը | քանակականցուցանիշը | | կատարմանժամկետը | | Վճարմաննեթակագումարը /հազար դրամ/ | Վճարմանժամկետը /ըստվճարմանժամանակացույցի/ |
| | | | ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանակացույցի | փաստացի | ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանակացույցի | փաստացի | | |
| 1. | Ոլունքբազմանիստ Փ-8մմ | Ապակյա, պլաստմասե, արհեստականքարերոլունքագործությանխմբակիուսուցողականաշխատանքներիհամարբազմանիստի -8մմ | 0,5 | 0,5 | 11.03.2019 | 14.02.2019 | 5.00 | 29.03.19 |
| 2. | Ոլունքմանր Փ-2մմ | Ապակյա, պլաստմասե, | 0,5 | 0,5 | 11.03.2019 | 14.02.2019 | 1.90 | 29.03.19 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | արհեստակա նքարերուլու նքագործությ անխմբակիու սուցողական աշխատանք ներիիամարբ ազմանիստ Φ-2մմ | | | | | | |
| 3. | Ուլունքիթել Φ-0,2մմ 30մ | Ուլունքիթելթ ափանցիկ, Φ-0,2մմ Լ-30գծմ : Նյութը՝ 100% նեյլոն: | 5 | 5 | 11.03.2019 | 14.02.2019 | 1.75 | 29.03.19 |
| 4. | Կապրոնթել 50կ | Կապրոնթելգ ծայինխտությ ունը՝ 50K: Բաղադրությ ունը՝ պոլիամիդեթ ելերիիամակ ցություն, պատվածիա տուկնյութով, գերտաքացո միցպահպա նելուհամար: կտրմանամր ությունըոչպ ակաս՝ 2կգ.վրկ | 2 | 2 | 11.03.2019 | 14.02.2019 | 0.70 | 29.03.19 |
| 5. | Մետաղակա նլար Φ-0,2մմ | Մետաղակա նլար Φ-0,2մմ նեյլոնեծածկ ույթով, | 2 | 2 | 11.03.2019 | 14.02.2019 | 1.60 | 29.03.19 |
| 6. | Ասեղծեռքի /10 հատ/ | Բարակասեղ , օգտագործվ ում էիագուստիմ ոդելավորմա ն, ասեղնագոր ծության, գոբելենագո րծության, | 10 | 10 | 11.03.2019 | 14.02.2019 | 3.50 | 29.03.19 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ուլունքագրոծությանմեջ, №10 | | | | | | |
| 7. | Ուլունքիփական<Կարտյե> | Ուլունքիմետաղական /պողպատյակամպղնձեզսպանակավորփականօղակով, շղթայինամրացնելուհնարավորությամբ, պատվածարծաթագույն, կամոսկեգույնշերտով: | 10 | 10 | 11.03.2019 | 14.02.2019 | 0.50 | 29.03.19 |
| 8. | Մետաղյաշղթա՝ Փ- 10մմ | Մետաղականշղթապատվածարծաթագույն, կամոսկեգույնշերտով, օղակներիտրամագիծը 10մմ: | 0,5 | 0,5 | 11.03.2019 | 14.02.2019 | 0.50 | 29.03.19 |
| 9. | Մետաղյաշղթա՝ Փ- 3մմ | Մետաղականշղթապատվածարծաթագույն, կամոսկեգույնշերտով, օղակներիտրամագիծը3մմ: | 0,5 | 0,5 | 11.03.2019 | 14.02.2019 | 0.35 | 29.03.19 |
| 10. | Մետաղականօղակ Փ-5մմ | Մետաղականօղակպատվածարծաթագույն, կամոսկեգույնշերտով, տրամագիծը 5մմ: | 50 | 50 | 11.03.2019 | 14.02.2019 | 0.15 | 29.03.19 |
| 11. | Մետաղականգավաթիկուլունքի Փ-5մմ /Калотты/ | Մետաղականզանգականմանուլունքիդետալ, տրամագիծը՝ 5մմ: | 50 | 50 | 11.03.2019 | 14.02.2019 | 0.15 | 29.03.19 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Օգտագործվու<br>մ է<br>ոլունքովհավ<br>աքվածշղթայի<br>ծայրերըփակե<br>լուհամար: | | | | | |
| 12. | Թելկոճիփոք<br>ր N40/2<br>/25գ//գունա<br>վոր/ | Տարբերգույն<br>երի,<br>օգտագործվ<br>ում է<br>ասեղնագոր<br>ծության,<br>կարիաշխա<br>տանքներիհ<br>ամար N40/2<br>/25գ/ | 10 | 10 | 11.03.2019 | 14.02.2019 | 1.50 | 29.03.19 |
| 13. | Թելկոճիմեծ<br>N40/2<br>3829մ/գուն<br>ավոր/ | Պոլիեսթեր՝3<br>829մետր,<br>տարբերգույ<br>նի,<br>օգտագործվ<br>ում է<br>ասեղնագոր<br>ծության,<br>կարիաշխա<br>տանքներիհ<br>ամար N40/2 | 10 | 10 | 11.03.2019 | 14.02.2019 | 7.50 | 29.03.19 |
| 14. | Կտորբամբա<br>կյաբարակս<br>պիտակ<br>լայն. 150սմ | Բամբակյագ<br>ունավորկտո<br>րբարակ՝նա<br>խատեսվածհ<br>ագուստկար<br>ելուհամար<br>150<br>սմլայնությա<br>մբ:<br>Խտությունը՝<br>113-150<br>գ/քառ.մ | 6 | 6 | 11.03.2019 | 14.02.2019 | 7.20 | 29.03.19 |
| 15. | Կտորբամբա<br>կյագունավո<br>ր 150սմ<br>լայն. | Բամբակյագ<br>ունավորկտո<br>րբարակ՝նա<br>խատեսվածհ<br>ագուստկար<br>ելուհամար<br>150<br>սմլայնությա<br>մբ:<br>Խտությունը՝<br>113-150 | 6 | 6 | 11.03.2019 | 14.02.2019 | 7.20 | 29.03.19 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գ/քառ.մ | | | | | | |
| 16. | Իրիսթել 30գր. 180մ | Մետաքսյա - բամբակյաթել, 30գր, 180մ | 12 | 12 | 11.03.2019 | 14.02.2019 | 4.20 | 29.03.19 |
| 17. | Մուլենիթել N12 20մ | Բամբակյաթել 20մետր N12 | 12 | 12 | 11.03.2019 | 14.02.2019 | 2.40 | 29.03.19 |
| 18. | Կտավ 150սմ լայն. | Վուշեկտոր, որնօգտագործվում է ասեղնագործության ևգեբելենագործությանմեջ 150սմլայնությամբ | 2 | 2 | 11.03.2019 | 14.02.2019 | 9.00 | 29.03.19 |
| 19. | Կանվա 90սմ լայն. | Ցանցավորօսլայածբամբակյահավասարաչափհյուսվածքովկտորնախատեսված է ասեղնագործության, համրովիաշխատանքներիհամար: 90սմ լայնությամբ | 2 | 2 | 11.03.2019 | 14.02.2019 | 7.00 | 29.03.19 |
| 20. | Օղակ /շրջանակ/ ասեղնագործության միջին Փ-19սմ | Օղակասեղնագործությանփայտյա, հղկված, ամրացնողպտուտակըմետաղական Փ-19սմ | 10 | 10 | 11.03.2019 | 14.02.2019 | 10.00 | 29.03.19 |
| 21. | Օղակ /շրջանակ/ ասեղնագործության մեծ Փ-24սմ | Օղակասեղնագործությանփայտյա, հղկված, ամրացնողպտուտակըմետաղական Փ-24սմ | 10 | 10 | 11.03.2019 | 14.02.2019 | 15.00 | 29.03.19 |
| 22. | Հեյուն /6 հատ/ | Մետաղյագործիքծայրըկեռիկով, օգտագործվում է գոբելենագործ | 3 | 3 | 11.03.2019 | 14.02.2019 | 4.50 | 29.03.19 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ությանմեջ /6հատ | | | | | | |
| 23. | Ժապավենկ տորից 6սմ լայն. | Ժապավենմե տաքսետարբ երգույների, լայնությունը 6սմ | 10 | 10 | 11.03.2019 | 14.02.2019 | 2.20 | 29.03.19 |
| 24. | Ժապավենկ տորից 2սմ լայն. | Ժապավենմե տաքսետարբ երգույների, լայնությունը 2սմ | 10 | 10 | 11.03.2019 | 14.02.2019 | 0.50 | 29.03.19 |
| 25. | Թելբամբակյ ա 35խտ | Բամբակյաթ ել 35 խտ. ,օգտագործվ ում է գործիհենքի համար: | 2 | 2 | 11.03.2019 | 14.02.2019 | 7.00 | 29.03.19 |
| 26. | Թելբրդյա 40խտ | Բրդյաթել 40 խտ. Օգտագործվու մ է գործգործելո ւհամար | 2 | 2 | 11.03.2019 | 14.02.2019 | 9.00 | 29.03.19 |
| 27. | Կտորմետաք սյա 150սմ լայն. | Կտորմետաք սյահաստ 150սմ: Խտությունը ստհենքի 50-70%, ըստմիջնաթ ելի՝ 45-60%: | 5 | 5 | 11.03.2019 | 14.02.2019 | 7.50 | 29.03.19 |

Սույն արձանագրությաներկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրըևդրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքըհանձնեց

ստորագրություն

Է. Կարապետյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքըընդունեց

ստորագրություն

Ս. Պետրոսյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հաշիվ վավերագիր<br>(արտադրանքների, ապրանքների առաքման) | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|
| 14 | Փետրվար | 2019 թ. | | Բ | 0423729843 |
| [4] Առաքման ամսաթիվ | | | | | |
| 14 | Փետրվար | 2019 թ. | | Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
| | | | | Սերիա | Համար |
| | | | | | |
| | | | | Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |

| | Պայմանագիր | |
|---|---|---|
| | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| | | |

| |
|---|
| [7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ) |
| |
| [7.1] ՀԴՄ կտրոնի համար |
| |

| Արտադրանք, ապրանք առաքող անձի | | |
|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 8 8 9 4 8 9 3 9 | |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | |
| [10] Անվանումը | ԷԴԳԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱՁ) | |
| [11] Բանկային տվյալները | Հայէկոնոմբանկ Գյումրու մ/ճ | N 163128034044 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ՉԵՐԱԶԻ Փ. 4 1 | |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ԳՅՈՒՄՐԻ ՉԵՐԱԶԻ Փ. 4 1 | |
| [14] Լրացուցիչ տվյալներ | | |

| Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի | | |
|---|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 5 5 0 4 4 1 2 | |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | ՀՀ ԿԳՆ <ԸՆՏԱՆԻՔ> ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) | |
| [18] Բանկային տվյալները | Երևանի թիվ 1 ՏԳԲ | N 900018005554 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԱՆԻ ԹՂՄ. 11 Փ. 5 2 | |
| [20] Լրացուցիչ տվյալներ | | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն | |
| | Լիազորագիր Համար | |
| | Լիազորագիր Ամսաթիվ | |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԳՅՈՒՄՐԻ ԱՆԻ ԹՂՄ. 11 Փ. 5 2 | |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ բնապ. հարկ | Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Ուլունք բազմանիստ Փ-8մմ | կգ | 0.5 | 10000 | | 5000 | | |
| 2 | Ուլունք մանր Փ-2մմ | կգ | 0.5 | 3800 | | 1900 | | |
| 3 | Ուլունքի թել Փ-0,2մմ 30մ | փաթույթ | 5 | 350 | | 1750 | | |
| 4 | Կապրոն թել 50կ | հատ | 2 | 350 | | 700 | | |
| 5 | Մետաղական լար Փ-0,2մմ | փաթույթ | 2 | 800 | | 1600 | | |
| 6 | Ասեղ ձեռքի /10 հատ/ | տուփ | 10 | 350 | | 3500 | | |
| 7 | Ուլունքի փական <Կարտյե> | հատ | 10 | 50 | | 500 | | |
| 8 | Մետաղյա շղթա՝ Փ- 10մմ | գծ.մ | 0.5 | 1000 | | 500 | | |
| 9 | Մետաղյա շղթա՝ Փ- 3մմ | գծ.մ | 0.5 | 700 | | 350 | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Մետաղական օղակ Փ-5մմ | գ | 50 | 3 | | 150 | | |
| 11 | "Մետաղական զավաթիկ ուլունքի Փ-5մմ /Калотты/" | գ | 50 | 3 | | 150 | | |
| 12 | Թել կոճի փոքր N40/2 /25գ//գունավոր/ | հատ | 10 | 150 | | 1500 | | |
| 13 | Թել կոճի մեծ N40/2 3829մ/գունավոր/ | հատ | 10 | 750 | | 7500 | | |
| 14 | "Կտոր բամբակյա բարակ սպիտակ լայն. 150սմ" | գծ.մ | 6 | 1200 | | 7200 | | |
| 15 | "Կտոր բամբակյա գունավոր 150սմ լայն." | գծ.մ | 6 | 1200 | | 7200 | | |
| 16 | Իրիս թել 30գր, 180մ | հատ | 12 | 350 | | 4200 | | |
| 17 | Մուլենի թել N12 20մ | հատ | 12 | 200 | | 2400 | | |
| 18 | Կտավ 150սմ լայն. | գծ.մ | 2 | 4500 | | 9000 | | |
| 19 | Կանվա 90սմ լայն. | գծ.մ | 2 | 3500 | | 7000 | | |
| 20 | "Օղակ /շրջանակ/ ասեղնագործության միջին Փ-19սմ" | հատ | 10 | 1000 | | 10000 | | |
| 21 | "Օղակ /շրջանակ/ ասեղնագործության մեծ Փ-24սմ" | հատ | 10 | 1500 | | 15000 | | |
| 22 | Հելյուն /6 հատ/ | տուփ | 3 | 1500 | | 4500 | | |
| 23 | Ժապավեն կտորից 6սմ լայն. | գծմ | 10 | 220 | | 2200 | | |
| 24 | Ժապավեն կտորից 2սմ լայն. | գծմ | 10 | 50 | | 500 | | |
| 25 | Թել բամբակյա 35խտ | կգ | 2 | 3500 | | 7000 | | |
| 26 | Թել բրդյա 40խտ | կգ | 2 | 4500 | | 9000 | | |
| 27 | Կտոր մետաքսյա 150սմ լայն. | գծմ | 5 | 1500 | | 7500 | | |
| Ընդամենը | | | | | | 117800 | | |

Առաքող՝ KARAPETYAN EDGAR 3304830081
(անունը, ազգանունը)

Ստացող MINASYAN ARTUR 2505620598
(անունը, ազգանունը)

14/02/2019 10:17:06

18/02/2019 17:47:55